տեսնես ալիւրի կամ ցորենի «փեթակը». դա մօտ 3 արշին բարձրութեամբ և $1^1/_2$ արշին լայնութեամբ՝ ցեխից շինուած, քառակուսի մի ամբար է, որի մէջ ածում են ամբողջ տարուայ համար աղացած ալիւրը։

Մի այլ անկիւնում դրուած է լինում 2—3 աւելի մանուկների գիւղական օրօրոցները, մի ուրիշ կողմում՝ պատի տակ՝ իրար կողքի շարուած են զանազան մեծութեամբ ջրի կժերն ու կարասները, մի այլ կողմում դրուած է դարակն իր բաժանմունքներով. այդ դարակների մէջ դասաւորուած են տան ամանեղէնները՝ մեծ և փոքր պղինձներ, թասեր, նալբաքիներ, փլաւի քամիչ և այլն։ Իսկ նրա վրան դրուած են մի քանի սալակներ. մի ուրիշ կողմում կողովների տակ դրուած է չորթանը, պանիրը կամ մածունը։ Այս սենեակի մօտ է գտնւում թոնրատունը։ Գրեթէ մէջտեղում թաղուած է թոնիրը, որի մօտ դրուած են լինում տաշտը, մաղը, սեղանատախտակը և այլն։ Իսկ դուրսը դռների և պատերի առաջ ընկած են երկրագործական զանազան գործիքներ.— արօր, լուծ, անիւներ, մանգաղ, գերանդի, ուրագ, կացին, քահ, խոփ և այլն։

Կահ կարասիներ եւ իրեր: Տանը գտնւում են հետևեալ կահ կարասիներն ու իրերը —անկողին՝ դոշակ, վերմակ, քարձ, դալի, կարպետ, թաղիք, տախտ (քիչ է). սեղան, աթոռ (քիչ են), հացի սնդուկ, կաթսա (զազան, կաթի, մսի, դաւուրմայի), թաւան, թեփսի, լագան, լանգեառի, խուփ, խնոցի (կաւէ) թաշտ,, կարաս, կճուճ, կուժ (մեծ ու փոքր), թասեր, սափոր, բժուրթ (կաթ կթելու աման), պտուկ (մածնի, կաթի), թէյի իրեր՝ սամովար (քիչ է), թէյաման, չայդան, թէյի բաժակ, գդալ, ափսէ, սինի, թեշէ, գդալ (մեծ). շերեփ, պատառաքաղ (քիչ է), ձիթի ճրագ, լամփա (քիչ է), մոմակալ, մաշա. fսակներ՝ ծըխախոտի, փողի, կանանչեղէնի, մսի, ծխախոտի աման, չիբուխ, ղէլլան, կշեռք, սանդր, հալելի (քիչ է), ճախարակ, ջահրա, թոռ, դազգահ (գորգ և կարպետ գործելու), խուր-